# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԱԲՈՎՅԱՆԻ N 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀՎՀՀ 03510416
ՀԵՌ. 0222-2-57-92, 2-57-93
378510 Ք. ԱԲՈՎՅԱՆ
ՏԱՐՏՈՒԻ ՓՈՂՈՑ 1/15
Էլեկտրոնային փոստի հասցե
abovyan2@schools.am

N 420

<< 05 >> 09 2019թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Տեղեկացնում եմ Ձեզ, որ <<Աբովյանի N 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի՝ մեկ, դասվարի՝ երկու, պատմության և հասարակագիտության՝ մեկ ուսուցչի թափուր տեղերի համար մրցույթի հայտարարությունը հրապարակվել է <<Կրթություն>> շաբաթաթերթում, որը ստորև ներկայացվում է:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի <<Աբովյանի N2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի դասվարի (2 մասնագետ), մաթեմատիկայի (24 դասաժամ), պատմության և հասարակագիտության (22 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),

2.Փաստաթուղթ(դիպլոմ)՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3.Անձնագրի պատճենը,

4.Ինքնակենսագրություն (Ձև 4),

5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և

հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6.Մեկ լուսանկար 3x4 չափի,
7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8.ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հոկտեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:
Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 3-ին ՝ ժամը 14:00-ին, Կոտայքի մարզի Աբովյանի հ.2 հիմնական դպրոցում. հասցեն՝ ք. Աբովյան, Տարտուի փողոց 1/15:
Տեղեկությունների համար զանգահարել՝ (0222)2-57-92 կամ 2-57-93 հեռախոսահամարներով:

Դպրոցի տնօրեն Ս. Հովհաննիսյան